ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

*ՊԱՏԳԱՄԱՎՈՐ*

---

*15 հունիսի 2020թ.*

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին և «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Աննա Կոստանյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Աննա Կոստանյան (120)
Մխիթար Հայրապետյան (049)
Վահագն Թևոսյան (037)
Արթուր Մանուկյան (032)
Արման Եղոյան (016)

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ
## ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ

### ԳԼՈՒԽ 1
### *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

Սույն օրենքի նպատակն է ապահովել կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, ստեղծել բավարար իրավական երաշխիքներ և աջակցել ազգային ֆիլմերի ստեղծմանը, տարածմանը, ցուցադրմանն ու առաջխաղացմանը, ինչպես նաև կինոժառանգության և կինոտարեգրության պահպանմանը և հասանելիության ապահովմանը:

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, պետական աջակցության նպատակներն ու ձևերը, պետական և այլ մարմինների լիազորությունները, կինեմատոգրաֆիական գործունության իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները:

**Հոդված 2. Կինեմատոգրաֆիայի մասին օրենսդրությունը**

1. Կինեմատոգրաֆիայի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (այսուհետ՝ միջազգային պայմանագրեր), սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով (այսուհետ՝ օրենք) և սույն օրենքին համապատասխան ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով:

**Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **ազգային կինոռեեստր՝** ազգային ֆիլմերի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրելու, գրառելու և օգտագործելու նպատակով ստեղծված տվյալների հիմնապահոց.

2) **ազգային ֆիլմերի աջակցության դրամագլուխ՝** աջակցություն տրամադրողների կողմից ազգային ֆիլմերի ստեղծման և առաջխաղացման նպատակով հատկացված գումարներ.

3) **աջակցություն տրամադրող՝** ֆիլմերի ստեղծման և տարածման համար ֆինանսավորում հատկացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով չի մասնակցում ֆիլմարտադրության գործընթացին, ձեռք չի բերում ֆիլմի նկատմամբ գույքային իրավունքներ և չի կարող ազդել ֆիլմարտադրողի որոշումների կայացման վրա.

4) **դասակարգում՝** ֆիլմի տարբերակում՝ ըստ դիտողների տարիքային սահմանափակման չափորոշիչների.

5) **ենթագրում՝** ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսքի կամ մեկնաբանություն պարունակող տեքստի արտածում կադրի ստորին հատվածում.

6) **լիամետրաժ ֆիլմ՝** 52 րոպեից ավելի տևողություն ունեցող ֆիլմ.

7) **կարճամետրաժ ֆիլմ՝** մինչև 52 րոպե տևողություն ունեցող ֆիլմ.

8) **կինեմատոգրաֆիա՝** մշակույթի և արվեստի ոլորտ, որն իր մեջ ներառում է ֆիլմի ստեղծման, տարածման, ցուցադրման հետ կապված մասնագիտական, ստեղծագործական, արտադրական, տեխնիկական, գիտական և կրթական գործունեության ամբողջություն.

9) **կինոթատրոն՝** համապատասխան տեխնիկական միջոցներով էկրանի վրա 50 և ավելի դիտողների համար նախատեսված ֆիլմի ցուցադրման առնվազն մեկ սրահ ունեցող վայր.

10) **կինոժառանգություն՝** ժառանգված, պահպանված, հաջորդ սերունդներին փոխանցվող և հանրային սեփականություն հանդիսացող ֆիլմի հիմնանյութ, ֆիլմի բնօրինակ կամ բնօրինակ պատճեն, ֆիլմի ստեղծման համար անհրաժեշտ պարագաներ (ռեկվիզիտ, կահույք, բեմադրական իր, հագուստ, սարք, սարքավորում, առարկա, կառույց), շարժական և անշարժ գույք.

11) **կինոտարեգրություն՝** փաստավավերագրական նյութ, որում ժամանակագրական կարգով արտացոլված է իրողությունների կամ փաստերի հաջորդական պատկերում՝ դրանք հետագայում օգտագործելու նպատակով.

12) **կինոփառատոն՝** տարբեր անվանակարգերում ընտրված ֆիլմերի ցուցադրման նպատակով մրցութային կամ ոչ մրցութային ծրագրով և հաստատված կանոնակարգով անցկացվող միջոցառում.

13) **կրկնօրինակում՝** ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսքի վանկավոր արտասանության համաժամանակյա թարգմանության հնչյունագրում.

14) **համատեղ արտադրություն՝** սույն օրենքով սահմանված կարգով երկու և ավելի ֆիլմարտադրողների կողմից իրականացվող համատեղ ֆիլմարտադրություն.

15) **հավաստագիր՝** ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայությունները դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.

16) **ձայնային ներկայացում՝** տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ֆիլմի դրվագների հակիրճ բանավոր նկարագրություն.

17) **մատակարար՝** ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայություններ մատուցող Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսվարող սուբյեկտ.

18) **նվազագույն շահավետ գին՝** տնտեսապես հիմնավորված նվազագույն գին, որով պետության գնային կարգավորման բացակայության դեպքում մատակարարի կողմից կմատուցվեր տվյալ ծառայությունը.

19) **ստեղծագործական խումբ՝** ֆիլմի ստեղծման մեջ ներգրավված աշխատախումբ, այդ թվում՝ սցենարի հեղինակ, բեմադրող ռեժիսոր, բեմադրող օպերատոր, բեմադրող նկարիչ, երաժշտության հեղինակ, հնչյունային ռեժիսոր, մոնտաժի ռեժիսոր, մոնտաժող, անիմատոր, զգեստների նկարիչ, առաջին, երկրորդ և երրորդ դերի դերասաններ.

20) **վարձույթ իրականացնող (դիստրիբյուտոր)՝** ֆիլմի վարձույթը կազմակերպող տնտեսվարող սուբյեկտ.

21) **վարձույթի վկայական՝** ֆիլմի վարձույթն իրականացնելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.

22) **տնտեսվարող սուբյեկտ՝** կինեմատոգրաֆիայի ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ.

23) **ֆիլմ՝** ստեղծագործական խմբի համատեղ գործունեության արդյունքում ստեղծագործական մտահղացման հիմքի վրա ստեղծված, թեմատիկ ամբողջականության մեջ միավորված, հետևողականորեն իրար կապակցված կադրերից կազմված, կինոժապավենի կամ այլ տեսակի կրիչների վրա ամրագրված և համապատասխան տեխնիկական միջոցներով հանրությանը ներկայացնելու համար նախատեսված տեսալսողական ստեղծագործություն.

24) **ֆիլմ ցուցադրող՝** ֆիլմի ցուցադրումը կազմակերպող տնտեսվարող սուբյեկտ.

25) **ֆիլմարտադրող՝** ստեղծագործական խմբի հետ կնքված պայմանագրերի հիման վրա ֆիլմի նկատմամբ բացառիկ գույքային իրավունքներ ձեռք բերող տնտեսվարող սուբյեկտ, ում նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ իրականացվում է ֆիլմարտադրությունը.

26) **ֆիլմարտադրություն՝** ֆիլմ ստեղծելու նպատակով իրականացվող գործունեություն՝ ստեղծագործական խմբի ներգրավմամբ, տեխնիկական և այլ միջոցների օգտագործմամբ.

27) **ֆիլմի բնօրինակ՝** որակական չափանիշներով ֆիլմի հիմնանյութի ձևաչափին համապատասխանող ֆիլմի վերջնական հաստատված տարբերակի առաջին օրինակ.

28) **ֆիլմի հիմնանյութ՝** նեգատիվ, հակատիպ, վերստուգիչ պատճեն, տեսահնչյունագրի, երաժշտության, ձայնային համադրման ու մագնիսային հնչյունագրերի բնօրինակ և նյութական կրիչի վրա պահվող ու ֆիլմի պահպանման և վերարտադրման համար անհրաժեշտ այլ նյութեր.

29) **ֆիլմի նախագիծ՝** ֆիլմի ստեղծման վերաբերյալ փաստաթղթերի ամբողջություն, որի հիման վրա ընդունվում են ֆիլմարտադրության կամ ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ.

30) **ֆիլմի պահպանություն՝** ֆիլմի հիմնանյութերի, ֆիլմի բնօրինակի կամ բնօրինակ պատճենների, ֆիլմի նախագծերի երկարաժամկետ պահպանմանը, պահպանվածության ապահովմանն ու վերականգնմանն ուղղված գործունեություն.

31) **ֆիլմի վարձույթ՝** ֆիլմի բնօրինակի, բնօրինակ պատճենների կամ օրինակների սահմանափակ ժամանակահատվածով օգտագործման տրամադրում.

32) **ֆիլմի ցուցադրում՝** ֆիլմի հրապարակային ցուցադրում կինոթատրոնում, համացանցով, հաղորդագծով կամ առանց հաղորդագծի, այդ թվում՝ հեռարձակում հեռուստատեսությամբ կամ արբանյակային կապի միջոցով:

**Հոդված 4. Կինեմատոգրաֆիայի պետական քաղաքականության սկզբունքները**

1. Կինեմատոգրաֆիայի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) ստեղծագործելու ազատությունը և պետական միջամտության բացառումը.

2) ստեղծագործողների ինքնուրույնությունն ու իրավահավասարությունը.

3) պետական աջակցության պարտադիրությունն ու անընդհատությունը.

4) պետական աջակցության թափանցիկությունն ու շահերի բախման կառավարումը.

5) կինոարվեստի պահպանումը, տարածումն ու զարգացումը.

6) ազգային ֆիլմերի ստեղծման և հանրահռչակման առաջնահերթությունը.

7) կինոտարեգրության ստեղծման և ֆինանսավորման պարտադիրությունը.

8) հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը:

**Հոդված 5. Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության նպատակներն ու ձևերը**

1. Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության նպատակներն են՝

1) կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացումն ու մրցունակության բարձրացումը.

2) ազգային ֆիլմերի ստեղծումը, տարածումն, առաջխաղացումն ու պահպանությունը.

3) ֆիլմերի համատեղ արտադրության խթանումը.

4) կինոժառանգության և կինոտարեգրության պահպանությունը.

5) միջազգային համագործակցությունն ու օտարերկրյա ներդրումների ներգրավումը:

2. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցության ձևերն են՝

1) իրավական դաշտի կատարելագործումը.

2) բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը.

3) ներդրումների իրականացումը և երաշխիքների տրամադրումը.

4) աջակցող ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը.

5) արտադրական և տեխնիկական անհրաժեշտ պայմանների ապահովումը.

6) կադրերի պատրաստումը և վերապատրաստումը.

7) կրթական, գիտական և տեղեկատվական համակարգերի զարգացումը.

8) նյութատեխնիկական հենքի արդիականացումը.

9) կինոարվեստին հաղորդակցվելու մատչելի պայմանների ստեղծումը.

10) ֆինանսավորման բարենպաստ պայմանների ապահովումը.

11) ֆիլմերի ստեղծման, տարածման, հանրահռչակման և պահպանման ֆինանսավորումը.

12) կինոփառատոների և կինոարվեստի այլ միջոցառումների կազմակերպումը.

13) կինոարվեստի միջոցառումներին մասնակցության ապահովումը.

14) օրենքով չարգելված այլ աջակցություն:

**Հոդված 6. Կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական միջամտության բացառումը**

1. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է պետության կողմից ստեղծագործական գործընթացին միջամտելու բացառումը և երաշխավորում է կինեմատոգրաֆիայի ոլորտում ազատ ստեղծագործելու ու ինքնաարտահայտվելու հնարավորությունը:

2. Կինեմատոգրաֆիայի ոլորտում գրաքննությունն, այդ թվում՝ պետական աջակցության մեխանիզմների գործադրման միջոցով, արգելվում է:

## ԳԼՈՒԽ 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Հոդված 7. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն)՝

1) իրականացնում է կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական միասնական քաղաքականությունը.

2) հաստատում է պետական բյուջեի միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորում տրամադրելու կարգը.

3) հաստատում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այսուհետ՝ պետական բյուջե) միջոցների հաշվին ֆիլմի առածին կատեգորիաների ֆինանսավորման մասնաբաժինները և սահմանաչափերը.

4) հաստատում է ֆիլմարտադրության և ֆիլմի ցուցադրման նպատակով ժամանակավոր ներմուծվող կամ արտահանվող ապրանքների ցանկը, որոնց համար սահմանվում է հայտարարագրման պարզեցված կարգ և մինչև մեկ աշխատանքային օր բաց թողնման ժամկետ.

5) հաստատում է ֆիլմարտադրության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձանց մուտքի վիզա ձեռք բերելու պահանջից ազատելու կարգը և առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկը.

6) հաստատում է հավաստագիր տրամադրելու կարգը.

7) հաստատում է վարձույթի վկայական տրամադրելու կարգը.

8) հաստատում է ազգային ֆիլմի կարգավիճակ տրամադրելու կարգը.

9) հաստատում է համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու կարգը.

10) հաստատում է ֆիլմը դասակարգելու և դրա վերաբերյալ նշում կատարելու կարգը.

11) հաստատում է դրամագլխին հատկացումներ կատարելու կարգը.

12) հաստատում է ազգային ֆիլմերի պահպանությունն իրականացնելու կարգը.

13) հաստատում է ազգային կինոռեեստր ստեղծելու և վարելու կարգը.

14) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

**Հոդված 8. Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի լիազորությունները**

1. Մշակույթի ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին)՝

1) մշակում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականությունը.

2) մշակում է կինեմատոգրաֆիայի զարգացմանն ուղղված ծրագրերն ու հայեցակարգերը.

3) ապահովում է կինեմատոգրաֆիայի միջազգային համագործակցության զարգացումը.

4) ուսումնասիրում է հավաստագիր տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և տրամադրում հավաստագիր.

5) հաստատում է ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերի կազմն ու նվազագույն շահավետ գների հաշվարկման նորմատիվները.

6) հաստատում է ֆինանսավորման նպատակով մրցույթ անցկացնելու կանոնակարգը.

7) հաստատում է ազգային մարմնի խորհրդի և գործադիր տնօրենի ընտրության կարգը.

8) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

**Հոդված 9. Ազգային մարմնի լիազորությունները**

1. Կինեմատոգրաֆիայի ոլորտում ազգային մարմինը (այսուհետ՝ ազգային մարմին)՝

1) ապահովում է լիազորված պետական մարմնի ծրագրով հաստատված տարեկան գործունեության իրականացումը.

2) ապահովում է պայմաններ երիտասարդ ստեղծագործողների լիարժեք ինքնադրսևորման, ստեղծագործական ներուժի վերարտադրման և իրացման համար.

3) ապահովում է պայմաններ կադրերի պատրաստման և վերապատրաստման համար.

4) ապահովում է պայմաններ ոլորտի կրթական համակարգի զարգացման համար.

5) ապահովում է պայմաններ փոքր և միջին ֆիլմարտադրողների կայացման համար.

6) ապահովում է շահերի բախման բացառումը կինեմատոգրաֆիայի ոլորտում.

7) ապահովում է կինոարվեստի ստեղծագործության բոլոր տեսակների զարգացումը.

8) ապահովում է պայմաններ ֆիլմերի ցուցադրման ցանցի ստեղծման համար.

9) ապահովում է ազգային կինոռեեստրի ստեղծումը և հետագա վարումը.

10) ապահովում է ազգային և համաշխարհային կինոժառանգության հասանելիությունը.

11) ապահովում է ֆիլմերի վերականգնումն ու թվայնացումը.

12) ապահովում է ֆիլմերի դասակարգումը.

13) ապահովում է պայմաններ համատեղ արտադրության զարգացման համար.

14) հատկացնում է ֆինանսավորում և կատարում նպատակային օգտագործման հսկում.

15) հաստատում է հարաբերություններ կինոարվեստի միջազգային կառույցների հետ.

16) աջակցում է ֆիլմի կրկնօրինակմանը, ենթագրմանը և ձայնային ներկայացմանը.

17) աջակցում է ազգային ֆիլմերի ստեղծմանը և հանրահռչակմանը.

18) աջակցում է դեբյուտային, մանկական և էքսպերիմենտալ ֆիլմերի ստեղծմանը.

19) աջակցում է կինոարվեստի միջոցառումներին ազգային ֆիլմերի մասնակցությանը.

20) ուսումնասիրում է ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխին հատկացումներ կատարելու համար հիմք հանդիսացող տեղեկությունները.

21) ուսումնասիրում է հանրային տարածքներում ֆիլմի նկարահանում իրականացնելու համար օրենքով նախատեսված պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը.

22) ուսումնասիրում է վարձույթի վկայական տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և տրամադրում վարձույթի վկայական.

23) ուսումնասիրում է ազգային ֆիլմի կարգավիճակ տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և տրամադրում ազգային ֆիլմի կարգավիճակ.

24) ուսումնասիրում է համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և տրամադրում համատեղ արտադրության կարգավիճակ.

25) իրականացնում է օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

## ԳԼՈՒԽ 3

## *ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ*

### Հոդված 10. Ազգային մարմինը

1. Կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված անդամություն չունեցող «Հայֆիլմ» ինստիտուտ անվանումով ոչ առևտրային կազմակերպություն է, որն ունի բացառիկ լիազորություններ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնելու կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորումը:

2. Ազգային մարմնի շահառուներն են Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսվարող սուբյեկտները (այսուհետ՝ շահառու):

3. Ազգային մարմինը հանդիսանում է աջակցություն տրամադրող և չի կարող ձեռք բերել գույքային իրավունքներ իր կողմից կամ իր միջոցով ֆինանսավորված ֆիլմերի նկատմամբ:

4. Ազգային մարմինը չի հանդիսանում ֆիլմարտադրող և չի կարող իրականացնել ֆիլմարտադրության հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն ինքնուրույն կամ այլ տնտեսվարող սուբյեկտի միջոցով, որում ունի բաժնեմասնակցություն կամ հնարավորություն կանխորոշելու վերջինիս կառավարման մարմինների որոշումները կամ էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա:

**Հոդված 11. Ազգային մարմնի խորհուրդը**

1. Ազգային մարմնի կառավարման բարձրագույն մարմինը յոթ անդամից բաղկացած հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհուրդ), որում ընդգրկվում են՝

1) լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

2) հանրային ֆինանսների կառավարման ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

3) տնտեսության ճյուղերի զարգացման ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

4) կինոարվեստի մասնագետների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրված և լիազորված պետական մարմնի սահմանած չափորոշիչների գնահատականների հանրագումարով առավելագույն միավորներ հավաքած մեկ օտարերկրյա և երեք տեղական փորձագետ՝ երեք տարի ժամկետով:

2. Խորհրդի անդամի ընտրության կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:

**Հոդված 12. Ազգային մարմնի գործադիր տնօրենը**

1. Ազգային մարմնի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ազգային մարմնի գործադիր տնօրենը (այսուհետ՝ գործադիր տնօրեն):

2. Գործադիր տնօրենը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից:

3. Գործադիր տնօրենն ընտրվում է խորհրդի կողմից մրցութային կարգով՝ կինեմատոգրաֆիայի ոլորտի բարեփոխման և զարգացման ծրագրերի առաջարկ ներկայացրած և մրցույթի արդյունքում լիազորված պետական մարմնի սահմանած չափորոշիչների գնահատականների հանրագումարով առավելագույն միավոր հավաքած թեկնածուն:

4. Գործադիր տնօրենն ընտրվում է երեք տարի ժամկետով և նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գործադիր տնօրենի պաշտոնում:

5. Գործադիր տնօրենի ընտրության նպատակով անցկացվող մրցույթին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն և կինեմատոգրաֆիայի ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացիները:

6. Գործադիր տնօրենի ընտրության կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:

## ԳԼՈՒԽ 4
## ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԸ, ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ, ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

### Հոդված 13. Ազգային ֆիլմը

1. Ազգային ֆիլմ է համարվում կինոթատրոններում ցուցադրվելու համար նախատեսված այն ֆիլմը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ բոլոր պայմաններին.

1) սցենարի հեղինակը կամ բեմադրող ռեժիսորը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է,

2) ստեղծագործական խմբի մեծամասնությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են,

3) ֆիլմի ստեղծման գործընթացում ներգրավված է Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրող:

1) Սույն օրենքի ուժով ազգային ֆիլմի կարգավիճակ են ստանում նաև այն ֆիլմերը, որոնց գույքային իրավունքները ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով փոխանցվել են Հայաստանի Հանրապետությանը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի պահանջը բավարարող և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստեղծված ֆիլմերը, այդ թվում՝ համատեղ արտադրության:

**Հոդված 14. Ազգային ֆիլմերի աջակցության դրամագլուխը**

1. Ազգային ֆիլմերի ստեղծման և առաջխաղացման նպատակով ձևավորվում է ազգային ֆիլմերի աջակցության դրամագլուխ (այսուհետ՝ դրամագլուխ), որը համալրվում է՝

1) հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից և կինոթատրոնում ֆիլմերի ցուցադրման գործունեությունից ստացվող եկամուտների 10 տոկոսի չափով ֆիլմ ցուցադրողների կողմից կատարվող հատկացումների հաշվին.

2) կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված և տվյալ տարվա ընթացքում շահառուներին չտրամադրված միջոցների չափով պետական բյուջեից կատարվող հատկացումների հաշվին.

3) օրենքով չարգելված այլ աղբյուրների հաշվին:

2. Հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից և կինոթատրոններում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացված եկամուտների մասին ազգային մարմնին տեղեկության տրամադրումը և դրա հիման վրա միջոցների հատկացումն իրականացվում է ֆիլմ ցուցադրողների կողմից՝ կառավարության սահմանած կարգով:

**Հոդված 15. Ազգային ֆիլմերի պահպանությունը և վիճակագրական հաշվառումը**

1. Ազգային ֆիլմերի պահպանությունը և կինոժառանգության հանրային օգտագործումը կազմակերպելու նպատակով ազգային ֆիլմի հիմնանյութերը, ֆիլմի բնօրինակը կամ բնօրինակ պատճենը և ֆիլմի հետ կապված փաստաթղթերը ֆիլմարտադրողները մշտական պահպանության են հանձնում Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ՝ կառավարության սահմանած կարգով:

2. Սույն հոդվածի 4-ին մասի պահանջը չի տարածվում՝

1) համատեղ արտադրության ազգային ֆիլմերի վրա, որոնց պահպանությունն իրականացվում է համատեղ արտադրության պայմանագրերի համաձայն.

2) մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստեղծված և կինոժառանգություն չհանդիսացող ազգային ֆիլմերի վրա, որոնց պահպանությունն իրականացվում է կամավորության սկզբունքով:

3. Ազգային ֆիլմերի վիճակագրական հաշվառումը կազմակերպելու նպատակով ազգային ֆիլմերի, ֆիլմարտադրողների և ստեղծագործական խմբի մասին տեղեկատվությունը հավաքագրվում և գրառվում է ազգային կինոռեեստրում ազգային մարմնի կողմից՝ կառավարության սահմանած կարգով:

## ԳԼՈՒԽ 5

## *ՖԻԼՄԻ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԸ, ՖԻԼՄԻ ՎԱՐՁՈՒՅԹԸ ԵՎ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ*

### Հոդված 16. Ֆիլմի նկարահանումը

1. Հայաստանի Հանրապետության հանրային տարածքներում ֆիլմի նկարահանում թույլատրվում է պետական կամ հանրային գույքի օգտագործման, բնության պահպանության, հասարակական կարգի պահպանման, անվտանգության, անխափան երթևեկության և ազատ տեղաշարժի ապահովման, այլոց առողջության և իրավունքների պաշտպանության, ինչպես նաև ընդհանուր պատասխանատվության և դժբախտ պատահարներից ապահովագրության հետ կապված օրենքով նախատեսված պահանջները կառավարության սահմանած կարգով բավարարելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջը չի տարածվում, եթե ֆիլմի նկարահանումն իրականացվում է մասնակիցների փոքրաթիվ խմբի ներգրավմամբ և առանց հատուկ հնարքների կամ բարդ տեխնիկայի կիրառման:

### Հոդված 17. Ֆիլմի վարձույթը

1. Հայաստանի Հանրապետությունում ֆիլմի վարձույթը թույլատրվում է կառավարության սահմանած կարգով ֆիլմը դասակարգելու և վարձույթի վկայական ստանալու դեպքում:

2. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է այն ֆիլմերի վարձույթը, որոնք կրում են՝

1) մարդու առողջության և ենթագիտակցության վրա բացասական ազդեցություն գործող ակնհայտ պոռնոգրաֆիկ բնույթ.

2) ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները հերքող, մեղմացնող, արդարացնող կամ բռնությունը քարոզող բնույթ.

3) թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման, պատրաստման կամ շրջանառության նկատմամբ հակում առաջացնող կամ ներգրավող բնույթ:

### Հոդված 18. Ֆիլմի ցուցադրումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմի ցուցադրում թույլատրվում է իրականացնել կառավարության սահմանած կարգով ֆիլմի տարիքային սահմանափակման մասին դիտողներին տեղեկացնելու նպատակով համապատասխան նշում կատարելու դեպքում:

2. Ազգային ֆիլմերի ցուցադրումը մեկ հեռուստաալիքով կամ մեկ կինոթատրոնում չի կարող ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման 20 տոկոսից պակաս լինել:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ֆիլմի ցուցադրման դեպքում, բացի սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջից, պետք է ապահովել նաև ֆիլմի հայերեն կրկնօրինակումը կամ տեսանելի ու հստակ ենթագրումը, բացառությամբ՝ ֆիլմում հնչող տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործությունների և այն դրվագների, որոնք էական չեն կամ ըստ ստեղծագործական մտահղացման պետք է լինեն օտարալեզու:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի պահանջը չի տարածվում շահույթ ստանալու նպատակ չհետապնդող գիտական, մշակութային, կրթական, ճանաչողական, օտար լեզուների իմացության բարելավման կամ ուսուցման և այլ նմանատիպ ծրագրերի, կինոփառատոների և կինոարվեստի այլ միջոցառումների շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների համար ֆիլմի ցուցադրման դեպքերի վրա:

## ԳԼՈՒԽ 6

## ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ՄՅՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Հոդված 19. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցությունը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում առնվազն 100 միլիոն ՀՀ դրամ նախահաշվային արժեքով ֆիլմարտադրություն իրականացնելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ հավաստագիր և դրա հիման վրա ֆիլմարտադրության հետ կապված ծառայությունները ձեռք բերել նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով:

2. Մատակարարի հաշվետու և դրան հաջորդող տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է հավաստագրի հիման վրա մատուցած ծառայությունների մասով չստացած եկամտի (նվազագույն շահավետ գնի և իրացման գնի տարբերության) 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան այդ ծառայությունների նվազագույն շահավետ գնի 20 տոկոսը:

3. Աջակցություն տրամադրողների հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են դրամագլխին կատարվող հատկացումների գումարները:

4. Շահառուների հարկման բազայի որոշման նպատակով եկամուտ չեն համարվում կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման նպատակով ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխից և պետական բյուջեից տրամադրվող գումարները:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ֆիլմ ցուցադրողների հարկման բազայի որոշման նպատակով եկամուտ չեն համարվում հեռուստատեսությամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից և կինոթատրոններում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացվող եկամուտները:

6. Ազգային ֆիլմի հիմնանյութերի, ֆիլմի բնօրինակի կամ բնօրինակ պատճենի և ֆիլմի հետ կապված փաստաթղթերի տրամադրումը Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ ազատվում է ավելացված արժեքի հարկից:

7. Ֆիլմարտադրության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք իրավունք ունեն ֆիլմի նախագծով հաստատված ժամկետի ընթացքում առանց մուտքի վիզայի գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքում և առանց աշխատանքի թույլտվության մասնակցել ֆիլմարտադրության աշխատանքներին՝ կառավարության սահմանած կարգով:

8. Ֆիլմարտադրության և կինոփառատոներում կամ կինոարվեստի այլ միջոցառումներում ֆիլմի ցուցադրման նպատակով ապրանքների ժամանակավոր ներմուծման ու արտահանման դեպքում գործում է հայտարարագրման պարզեցված կարգ և սահմանվում է հայտարարագրի ընդունման պահից չորս ժամվա ընթացքում ապրանքների բաց թողնման ժամկետ՝ առանց մաքսային վճարների վճարման:

**Հոդված 20. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական ֆինանսավորումը**

1. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական ֆինանսավորումն (այսուհետ՝ պետական ֆինանսավորում) իրականացվում է լիազորված պետական մարմնի հաստատած ծրագրով և չի հանդիսանում պետական պատվեր:

2. Պետական ֆինանսավորման նպատակով յուրաքանչյուր տարի պետական բյուջեով նախատեսվում է միջոցների հատկացում՝ տվյալ տարվա բյուջետային ծախսերի առնվազն 0,1 տոկոսի չափով:

3. Պետական ֆինանսավորումն իրականացվում է ֆիլմի առանձին կատեգորիաների համար հաստատված մասնաբաժինների և սահմանաչափերի համաձայն, որոնք սահմանում է կառավարությունն՝ ըստ.

1) ֆիլմի զարգացման, արտադրության, հետարտադրության և ֆիլմը հանրությանը ներկայացման փուլերի,

2) առավելագույն և նվազագույն չափով մասնակցության կարգավիճակի,

3) լիամետրաժ ֆիլմ և կարճամետրաժ ֆիլմ տեսակների,

4) դեբյուտային ֆիլմ, մանկական ֆիլմ և էքսպերիմենտալ ֆիլմ քվոտաների:

4. Պետական ֆինանսավորման համար նախատեսված միջոցները մինչև շահառուներին կամ ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխին հատկացնելը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության սեփականությունը:

5. Պետական ֆինանսավորման համար նախատեսված միջոցները տվյալ տարվա ընթացքում ամբողջությամբ շահառուներին չտրամադրելը հիմք չէ հաջորդ տարիների պետական բյուջեով կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական ֆինանսավորման համար միջոցներ չնախատեսելու կամ պակաս նախատեսելու համար:

6. Ազգային մարմնի ընթացիկ գործունեության, ազգային ֆիլմերի, կինոժառանգության և կինոտարեգրության պահպանության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի այլ միջոցների հաշվին:

**Հոդված 21. Մրցույթ անցկացնելու կարգը և պայմանները**

1. Պետական բյուջեի և դրամագլխի միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորումն իրականացվում է կառավարության սահմանած կարգով ֆիլմի տարբեր անվանակարգերում առանձին անցկացվող մրցույթների (այսուհետ՝ մրցույթ) արդյունքում:

2. Լիազորված պետական մարմնի հաստատած կանոնակարգի համաձայն ձևավորվում է ֆիլմի յուրաքանչյուր անվանակարգում անցկացվող մրցույթի՝ հինգ անդամից բաղկացած փորձագետների հանձնախումբ, որում ընդգրկվում են՝

1) լիազորված պետական մարմնի կողմից հաստատված չափորոշիչների միավորների հանրագումարով փորձագետների շտեմարանում ներառված կինոարվեստի մասնագետներից վիճակահանությամբ ընտրված երեք տեղական փորձագետ.

2) կինոարվեստի մասնագետների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների՝ հավասար ներգրավվածության ապահովմամբ առաջադրած թեկնածուներից խորհրդի հավանությանն արժանացած երկու օտարերկրյա փորձագետ:

3. Մրցույթներն անցկացվում են ազգային մարմնի սահմանած ժամանակացույցի համաձայն տարեկան առնվազն երկու անգամ, որին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած այն ֆիլմարտադրողները, որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ բոլոր պայմաններին.

1) սցենարի հիմքի վրա ֆիլմարտադրություն իրականացնելու իրավունքի առկայություն,

2) ստեղծագործական խմբում Հայաստանի Հանրապետության քաղաքացու առկայություն:

4. Մրցույթին չեն կարող մասնակցել այն ֆիլմարտադրողները, որոնք պետական բյուջեի կամ դրամագլխի միջոցների հաշվին ֆինանսավորում են ստացել երկու ֆիլմի նախագծերի համար և այդ ֆիլմերից ոչ մեկը չի մասնակցել առնվազն երեք միջազգային կինոփառատոների մրցութային ծրագրի կամ վերջին ֆինանսավորումից հետո չի անցել երեք տարի:

5. Մրցույթին ներկայացված հայտերը գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

1) ֆիլմի գեղագիտական-գեղարվեստական արժեքը.

2) ֆիլմի միջազգային ճանաչման հնարավորությունը.

3) ֆիլմի նախագծի իրականացվելիության ներուժը.

4) ֆիլմի նախագծի տնտեսական հիմնավորումը.

5) ֆիլմի առաջխաղացման և հանրությանը ներկայացման հեռանկարը:

6. Մրցույթի և ֆիլմի նախագծերի պաշտպանության (փիչինգի) արդյունքների հիման վրա փորձագետների հանձնախումբը հաստատում է այն ֆիլմարտադրողների ցանկը, որոնց հետ կարող են կնքվել ֆինանսավորում հատկացնելու պայմանագրեր:

## ԳԼՈՒԽ 7

## *ՀԱՎԱՍՏԱԳՐԻ, ՎԱՐՁՈՒՅԹԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ, ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ*

### Հոդված 22. Հավաստագրի տրամադրումը և գործողության դադարեցումը

1. Հավաստագիր ստանալու համար ֆիլմարտադրողը լիազորված պետական մարմին է ներկայացնում.

1) հավաստագիր ստանալու մասին դիմում,

2) ֆիլմի նախագիծը,

3) ֆիլմարտադրության ժամանակացույցը,

4) ֆիլմի նախահաշիվը,

5) ֆիլմի ֆինանսավորման պլանը:

2. Հավաստագրի տրամադրման դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, և տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում.

4) ֆիլմարտադրողը նախկինում խախտել է օրենքով սահմանված պահանջները:

3. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

3) ներկայացվել է հավաստագրի գործողությունը դադարեցնելու դիմում:

4. Հավաստագիրը տրամադրվում է լիազորված պետական մարմնի կողմից՝ կառավարության սահմանած կարգով:

**Հոդված 23. Վարձույթի վկայականի տրամադրումը և գործողության դադարեցումը**

1. Վարձույթի վկայական ստանալու համար վարձույթ իրականացնողը ազգային մարմին է ներկայացնում.

1) վարձույթի վկայական ստանալու մասին դիմում,

2) ֆիլմի համառոտ նկարագիրը,

3) ֆիլմի վերաբերյալ տեղեկատվություն,

4) ֆիլմի դասակարգման մասին հայտարարություն,

5) ֆիլմի գույքային իրավունքների վերաբերյալ հայտարարագիր:

2. Վարձույթի վկայականի տրամադրման դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, և տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում:

3. Վարձույթի վկայականի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

3) ներկայացվել է վարձույթի վկայականի գործողությունը դադարեցնելու դիմում:

4. Վարձույթի վկայականը տրամադրվում է ազգային մարմնի կողմից՝ կառավարության սահմանած կարգով:

**Հոդված 24. Ազգային ֆիլմի կարգավիճակի տրամադրումը և դադարեցումը**

1. Ազգային ֆիլմի կարգավիճակ ստանալու համար ֆիլմարտադրողը ազգային մարմին է ներկայացնում.

1) ազգային ֆիլմի կարգավիճակ ստանալու մասին դիմում,

2) ֆիլմի նախագիծը,

3) ֆիլմարտադրողների հետ կապված տեղեկատվություն,

4) ֆիլմի ստեղծագործական խմբի հետ կապված տեղեկատվություն,

5) ֆիլմի հեղինակային իրավունքների վերաբերյալ հայտարարագիր:

2. Ազգային ֆիլմի կարգավիճակի տրամադրման դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, և տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում:

3. Ազգային ֆիլմի կարգավիճակը դադարեցվում է, եթե՝

1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

4. Ազգային ֆիլմի կարգավիճակը տրամադրվում է ազգային մարմնի կողմից՝ կառավարության սահմանած կարգով:

**Հոդված 25. Համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրումը և դադարեցումը**

1. Համատեղ արտադրության կարգավիճակ ստանալու համար ֆիլմարտադրողը ազգային մարմին է ներկայացնում.

1) համատեղ արտադրության կարգավիճակ ստանալու մասին դիմում,

2) ֆիլմի համառոտ նկարագիրը,

3) ֆիլմի նախահաշիվը և ֆինանսավորման պլանը,

4) ֆիլմի համատեղ արտադրության պայմանագիրը,

5) ֆիլմի ստեղծագործական և տեխնիկական ներդրումների ցուցակը:

2. Համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, և տեղեկացնելուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում թերությունները չեն վերացվում:

3. Համատեղ արտադրության կարգավիճակը դադարեցվում է, եթե՝

1) ներկայացվել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

4. Համատեղ արտադրության կարգավիճակը տրամադրվում է ազգային մարմնի կողմից՝ կառավարության սահմանած կարգով:

## ԳԼՈՒԽ 8
## *ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ*

### Հոդված 26. Միջազգային համագործակցությունը

1. Կինեմատոգրաֆիայի միջազգային համագործակցությունն իրականացվում է միջազգային պայմանագրերի ու Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն և նախատեսում է՝

1) օտարերկրյա ֆիլմարտադրողների հետ համատեղ արտադրության իրականացում.

2) օտարերկրյա պետություններում կազմակերպվող կինոփառատոներին և կինոարվեստի այլ միջոցառումներին ազգային ֆիլմերի մասնակցության ապահովում.

3) օտարերկրյա պետություններում ազգային ֆիլմի օրերի, շաբաթների, կինոփառատոների և կինոարվեստի այլ միջոցառումների կազմակերպում.

4) Հայաստանի Հանրապետությունում անցկացվող կինոփառատոների և կինոարվեստի այլ միջոցառումներին օտարերկրյա ֆիլմարտադրողների և միջազգային կազմակերպությունների մասնակցության ապահովում.

5) միջազգային համագործակցության այլ ձևեր:

### Հոդված 27. Համատեղ արտադրությունը

1. Համատեղ արտադրություն է համարվում այն ֆիլմարտադրությունը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ բոլոր պայմաններին.

1) առկա է մասնակցության առավելագույն մաս ներկայացնող ֆիլմարտադրող, որն ունի ստեղծագործական ու տեխնիկական փաստացի մասնակցություն ֆիլմարտադրության մեջ և բավարարում է այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են որպեսզի համատեղ արտադրության ֆիլմը համարվի ազգային ֆիլմ,

2) առկա է մասնակցության նվազագույն մաս ներկայացնող մեկ կամ մի քանի ֆիլմարտադրող,

3) առկա է համատեղ արտադրության պայմանագիր, որն ունի եկամուտների և տարածքների բաշխման վերաբերյալ դրույթներ:

2. Համատեղ արտադրության ֆիլմերը օգտվում են սույն օրենքի համաձայն ազգային ֆիլմին վերապահվող առավելություններից:

## ԳԼՈՒԽ 9

## *ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

### Հոդված 28. Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասերով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, 18-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ 10

## *ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 29. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 11-21-րդ հոդվածների դրույթները գործելու են դրանք կանոնակարգող կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

3. Սույն օրենքով նախատեսված կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.19-րդ հոդվածով.

«Հոդված 189.19. Ֆիլմի ցուցադրման վերաբերյալ տեղեկություն տրամադրելու պահանջները խախտելը

1. Ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ ազգային ֆիլմերի մասնաբաժնի, ինչպես նաև հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից ու կինոթատրոններում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ ազգային ֆիլմերի մասնաբաժնի, ինչպես նաև հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից ու կինոթատրոններում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ կեղծ տեղեկություն տրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.20-րդ հոդվածով.

«Հոդված 189.20. Ազգային ֆիլմը մշտական պահպանության հանձնելու պահանջները խախտելը

1. Ազգային ֆիլմի հիմնանյութերը, ֆիլմի բնօրինակը կամ բնօրինակ պատճենը և ֆիլմի հետ կապված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ մշտական պահպանության հանձնելու պահանջները խախտելը.

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմարտադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքում վարչական իրավախախտում կատարած անձը լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից կողմից իրավախախտումը հայտնաբերելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է իրավախախտման հատկանիշները, ապա նա ազատվում է նշանակված վարչական տույժը կատարելու պարտականությունից:»:

**Հոդված 3.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.21-րդ հոդվածով.

«Հոդված 189.21. Առանց օրենքով նախատեսված պահանջները բավարարելու հանրային տարածքներում ֆիլմի նկարահանում իրականացնելը

1. Առանց օրենով նախատեսված պահանջները բավարարելու հանրային տարածքներում ֆիլմի նկարահանում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմարտադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմարտադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 4.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.22-րդ հոդվածով.

«Հոդված 189.22. Առանց ֆիլմը դասակարգելու և վարձույթի վկայական ստանալու ֆիլմի վարձույթ իրականացնելը

1. Առանց ֆիլը դասակարգելու և վարձույթի վկայական ստանալու ֆիլմի վարձույթ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում վարձույթ իրականացնողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում վարձույթ իրականացնողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 5.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 189.23-րդ հոդվածով.

«Հոդված 189.23. Ազգային ֆիլմ ցուցադրելու, օտարալեզու ֆիլմի կրկնօրինակումը կամ ենթագրումը ապահովելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու պահանջները խախտելը

1. Ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ ազգային ֆիլմերի մասնաբաժինը 20 տոկոս կազմելու, օտարալեզու ֆիլմի հայերեն կրկնօրինակումը կամ տեսանելի ու հստակ ենթագրումը ապահովելու, ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու պահանջները խախտելը.

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում.

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 6.** Օրենսգրքի 219.1-ին հոդվածի 2-րդ մասը «189.12-րդ» բառերից հետո լրացնել «, 189.18-րդ, 189.19-րդ, 189.20-րդ, 189.21-րդ, 189.22-րդ և 189.23-րդ» բառերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 56-58-րդ կետերով.

«56) ֆիլմարտադրողների կողմից ազգային ֆիլմի հիմնանյութերի, ֆիլմի բնօրինակի կամ բնօրինակ պատճենի և ֆիլմի հետ կապված փաստաթղթերի անհատույց տրամադրումը Հայաստանի Հանրապետության ազգային արխիվին՝ մշտական պահպանության.

57) հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում գովազդի տեղադրումը ՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը .

58) կինոթատրոնում ֆիլմ ցուցադրելու գործունեությունը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22-24-րդ կետերով.

«22) կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման նպատակով ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխից և պետական բյուջեից տրամադրվող գումարները.

23) հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից ստացվող եկամուտները՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը.

24) կինոթատրոնում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացվող եկամուտները՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:»:

**Հոդված 3**. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-18-րդ կետերով.

«17) հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի գծով կատարվող ծախսերը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը.

18) կինոթատրոններում ֆիլմի ցուցադրման գործունեության գծով կատարվող ծախսերը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխին կատարվող մասհանումները:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 127-րդ հոդվածի 3-րդ մասը «նվազեցվում է» բառից հետո լրացնել «այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությանը կամ» բառերով:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

# «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-241-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 217-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 217. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների ժամանակավոր ներմուծումը

1. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ֆիլմարտադրության կամ կինոփառատոներում և կինոարվեստի այլ միջոցառումներում ֆիլմի ցուցադրման նպատակով ժամանակավոր ներմուծվող գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ենթակա են պարզեցված կարգով հայտարարագրման՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Կառավարությունը կարող է սահմանել այն ապրանքների առավելագույն քանակը և (կամ) առավելագույն արժեքը, որոնք ժամանակավոր ներմուծվում են որպես գիտական կամ առևտրային նմուշներ, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքներ միևնույն անձի կողմից՝ միանգամյա կամ որոշակի ժամանակահատվածում՝ Միության մաքսային օրենսդրությանը համապատասխան:

3. Ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ուղեկցվող ուղեբեռում գտնվող, ինչպես նաև փոստային առաքումներով տեղափոխվող գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները, որոնց արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը, հայտարարագրվում են պարզեցված կարգով՝ մաքսային հայտարարագրի փոխարեն մաքսային մարմիններին ներկայացնելով գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ստացող կազմակերպության գրավոր դիմում: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:

4. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով բաց թողնելու ժամկետը մաքսային հայտարարագրի ընդունման պահից կազմում է չորս ժամ՝ մաքսային հայտարարագրի հետ միաժամանակ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:

5. Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց ժամանակավոր ներմուծման համար կարող է սահմանվել մինչև մեկ աշխատանքային օր բաց թողնելու ժամկետ:»:

**Հոդված 2.** Օրենքի 221-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 221. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների ժամանակավոր արտահանումը

1. Գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները, որոնք ժամանակավոր արտահանվում են Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս՝ փորձարկումների, հետազոտությունների, ստուգումների ենթարկելու, ֆիլմարտադրության կամ կինոփառատոներում և կինոարվեստի այլ միջոցառումներում ֆիլմի ցուցադրման կամ նման գործողությունների իրականացման ընթացքում օգտագործելու նպատակով հայտարարագրվում են մաքսային հայտարարագրման պարզեցված կարգով՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ, ինչպես նաև փոստային առաքումներով Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս ժամանակավոր արտահանվող գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները հայտարարատուի ցանկությամբ կարող են հայտարարագրվել պարզեցված կարգով՝ գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ուղարկող կազմակերպության գրավոր դիմումը որպես մաքսային հայտարարագիր ներկայացնելով: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:

3. Գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները «Ժամանակավոր արտահանման» ընթացակարգով բաց են թողնվում մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ չորս ժամվա ընթացքում:

4. Մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց բաց թողնման ժամկետը կարող է կազմել մինչև մեկ աշխատանքային օր:»:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Կինեմատոգրաֆիայի մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Մաքսային կարգավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման**

**Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը**

Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է կինեմատոգրաֆայի ոլորտի համապարփակ կարգավորման և միասնական իրավական հիմքերի սահմանման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է կանոնակարգել ֆիլմարտադրության, ֆիլմերի վարձույթի, ցուցադրման, կինոփառատոներում ու կինոշուկաներում մասնակցության պետական ֆինանսավորման, օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով հավաստագրերի տրամադրման, հեղինակային ու հարակից իրավունքների պաշտպանության, ֆիլմերի վիճակագրական հաշվառման ու պահպանության նպատակով վարձույթի վկայականների տրամադրման, տարիքային սահմանափակման մասին դիտողներին տեղեկացնելու նպատակով ֆիլմերի դասակարգման, Հայաստանի Հանրապետության կառավարության, մշակույթի ոլորտում կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի և կինեմատոգրաֆիայի ոլորտի տեղական և միջազգային կազմակերպությունների միջև համագործակցության հետ կապված հարաբերությունները:

**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում բացակայում է կինեմատոգրաֆիայի ոլորտը կարգավորող իրավական ակտ, որի արդյունքում մի շարք կարևոր հարաբերություններ օրենսդրական կարգավորում չեն ստացել, իսկ առկա կարգավորումները չեն ապահովում եզրույթների օգտագործման միասնականությունը: Կարգավորված չեն ֆիլմարտադրության, ֆիլմերի վարձույթի, ցուցադրման, միջազգային կինոփառատոներին մասնակցության պետական ֆինանսավորման և պետական աջակցության այլ ձևերը: Որևէ կերպ չի

խրախուսվում օտարերկրյա ֆիլմերի նկարահանումը Հայաստանի Հանրապետությունում: Կինոթատրոններում և հեռուստատեսությամբ ֆիլմերի հրապարակային ցուցադրումը իրականացվում է առանց տարիքային սահմանափակումների մասին նշում անելու, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ բարոյական նորմերի և երեխաների իրավունքների պաշտպանության վրա: Կարգավորված չէ ֆիլմերի վարձույթի իրականացման հետ կապված հարցերը, ըստ որի ֆիլմերի վարձույթը կիրականացվի օրինական դաշտում և կպաշտպանվեն բոլոր հեղինակային և հարակից իրավունքները:

Միաժամանակ, օրենքով կկանոնակարգվի կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի լիազորությունները, որի համաձայն հիշյալ մարմնի գործունեությունը կկարգավորվի օրենքով: Բացի այդ կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի կողմից կինեմատոգրաֆիայի ոլորտին ֆինանսավորելու համար կընձեռվի հնարավորություն ներգրավելու լրացուցիչ ֆինանսական միջոցներ ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխի ձևավորման արդյունքում:

**Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը**

Օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման և ոլորտի զարգացման անհրաժեշտությամբ, որը կապահովի իրավական դաշտում օգտագործվող եզրույթների միասնականությունը և հիմք կհանդիսանա այլ իրավական ակտերի մշակման և կիրարկման համար:

Օրենքների նախագծերը մշակվել են հիմք ընդունելով մի շարք երկրներում կինեմատոգրաֆիայի օրենսդրական կարգավորման փորձը: Մասնավորապես, ուսումնասիրվել են Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ռումինիայի, Կանադայի, Չեխիայի, Հունգարիայի, Մոլդովայի, Վրաստանի, Բուլղարիայի, Իսլանդիայի, Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների կինեմատոգրաֆիային ոլորտը կարգավորող իրավական ակտեր, որտեղ օրենսդրորեն ճանաչվում է կինեմատոգրաֆիայի հատուկ նշանակությունը և առանձնահատուկ օրենսդրական կարգավորում է նախատեսվում ոլորտի պետական աջակցության համար:

Միջազգային փորձը հատկապես ուսումնասիրվել է հարկային արտոնությունների, պետական ֆինանսավորման, վարձույթի վկայականի, կինոմատոգրաֆիայի ազգային մարմնի լիազորությունների, միջազգային համագործակցության և մի շարք այլ կարևոր հարցերի մասով:

Օրենքների նախագծերը նպատակ ունեն՝

- Հստակեցնել կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, պետական կառավարման մարմնի և ազգային մարմնի լիազորությունները,
- Սահմանել ֆիլմարտադրության, ֆիլմերի վարձույթի, ցուցադրման, կինոփառատոներին մասնակցության պետական աջակցության իրականացման հիմնական կանոնները,
- Սահմանել ֆիլմարտադրության, ֆիլմերի ցուցադրման, վարձույթի իրականացման, վիճակագրական հաշվառման, պահպանության և օգտագործման հիմնական կանոնները,
- Սահմանել հավաստագրի, վարձույթի վկայականի, ազգային ֆիլմի և համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման հիմնական կանոնները:
- Ազգային ֆիլմերի ստեղծման և առաջխաղացման նպատակով հատկացումների կատարման և բարենպաստ պայմանների ստեղծման հիմնական կանոնները:

Ակնկալվում է, որ նշված օրենքների նախագծերի ընդունումը նոր խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում կինեմատոգրաֆիայի զարգացման համար, մասնավորապես՝ օրենսդրական փաթեթի ընդունումը կնպաստի՝

- Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը, շահերի բախման և պետական միջամտության բացառմանը,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտում հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությանը,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտում տնտեսական գործունեության ակտիվության բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- Ֆիլմարտադրության համար գրավիչ միջավայրի ու բարենպաստ պայմանների ստեղծմանը և օտարերկրյա ներդրումների ներգրավմանը,
- Ազգային ֆիլմերի ստեղծմանը, ներկայացմանը և մրցունակության բարձրացմանը,
- Հայաստանի Հանրապետության, հայկական մշակույթի և պատմության ճանաչելիության բարձրացմանը,
- Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով կինոթատրոնների ցանցի ստեղծմանը,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտում միջազգային համագործակցության և համատեղ արտադրության զարգացմանը:

# Տեղեկանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 64. Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները**

1. ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:
2. ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները.
1) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, արհեստագործական ուսումնարանների, որակավորման և վերաորակավորման, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը: Սույն կետում նշված հասկացությունները կիրառվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում նույն հասկացությունների կիրառության իմաստով ու նշանակությամբ.
2) դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.
3) Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների կատարումը.
4) հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարումը: Սույն կետով սահմանված արտոնության կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.
5) հանրակրթության ոլորտում իրականացվող՝ կրթության և գիտության բնագավառում Կառավարության լիազոր մարմնի ճանաչած, երաշխավորած և Կառավարության սահմանած չափորոշիչներին համապատասխանող կրթական բնույթի առարկայական մրցույթներին, մրցաշարերին, օլիմպիադաներին մասնակցության իրավունքի տրամադրումը.
6) նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատներում, մանկատներում, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատություններում, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունների մատուցումը, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

7) հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և (կամ) ծառայությունների անհատույց մատուցումը.
8) թաղման բյուրոների, գերեզմանատների, ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների օտարումը.
9) կրոնական ծիսակատարությունների կազմակերպման ծառայությունների մատուցումը, կրոնական կազմակերպություններին կրոնական պարագաների օտարումը, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների օտարումը.
10) օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական, բարեգործական, կրոնական կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների ներմուծումը, ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև սույն կետի համաձայն, ԱԱՀ-ից ազատվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շրջանակները որոշում է Կառավարության լիազոր մարմինը.
11) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների, մասնավորապես հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բժշկական խորհրդատվության, բուժական, վերականգնողական, բժշկական փորձաքննության անցկացման ծառայությունների մատուցումը.
12) դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.
13) պետության կամ համայնքի կողմից կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը.
14) բռնագրավման կամ նվիրատվության ձևով ապրանքի մատակարարումը պետությանը: Սույն կետը չի տարածվում բռնագանձման ձևով պետությանը ապրանքի մատակարարման գործարքների վրա, որոնց դեպքում ապրանքի մատակարարման գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման Օրենսգրքով սահմանված կարգով.
15) հողամասից կամովին հրաժարվելու դեպքում սեփականության իրավունքով պատկանող հողամասի օտարումը համայնքին կամ պետությանը.
16) հողամասի կամ այլ անշարժ գույքի փոխանակությունը, եթե այդ գործարքի կողմ են հանդիսանում պետությունը և (կամ) համայնքը.

17) սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը, եթե նշված ծրագրերն արժանացել են Կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը: Սույն կետում նշված մասնագիտական հանձնաժողովի գործունեության կարգը և կազմը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի՝ որպես արտոնյալ որակավորման, փոփոխման կամ կասեցման կարգերը սահմանում է Կառավարությունը.

18) պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն ծառայությունների մատուցումը, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի և (կամ) տեղական տուրքի վճարում, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) համայնքային կառավարչական հիմնարկների կողմից ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումն այն մասով, որից հասույթը հաշվեգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին: Սույն կետի կիրառության իմաստով՝ հասույթի կամ դրա մի մասի հաշվեգրումը պետական կամ համայնքների բյուջեների օգտին պետք է հիմնավորվի դրանց համապատասխան գանձապետական հաշվին փոխանցմամբ.↩

19) կոնցեսիոների (օպերատորի) կողմից Կառավարության սահմանած չափանիշների համաձայն Կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագիր որակված գործարքի պայմանների շրջանակներում կոնցեդենտին (շնորհատուին) պատկանող ենթակառուցվածքային ակտիվների, դրանց առանձին տարրերի վրա կատարված բարելավման արդյունքի կամ գնված կամ կառուցված կամ փոխարինված ենթակառուցվածքային ակտիվների (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերի՝ կոնցեսիայի պայմանագրի գործողության ընթացքում կամ ավարտին կոնցեդենտին (շնորհատուին) օտարումը, ինչպես նաև կոնցեդենտին (շնորհատուին) կոնցեսիոն ծառայությունների մատուցումը: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. կոնցեդենտ (շնորհատու) է համարվում պետական կամ համայնքային մարմինը, որը որոշակի ժամանակահատվածով կոնցեսիոներին (օպերատորին) է տրամադրում հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ դրանք շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով,

բ. կոնցեսիոներ (օպերատոր) է համարվում ռեզիդենտ կազմակերպությունը, որին կոնցեդենտի (շնորհատուի) կողմից տրամադրվում են հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ հանրային ծառայություն մատուցելու և (կամ) այն բարելավելու նպատակով, և որը շահագործում և (կամ) սպասարկում է այդ ենթակառուցվածքները սահմանված ժամանակաշրջանի ընթացքում.

20) ԱՏԳԱԱ 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմերի և տնկանյութի օտարումը.

21) անմիջական արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ ԱՏԳԱԱ 570110, 570210 ծածկագրերին դասվող ձեռագործ գորգերի օտարումը.

22) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարումը.
23) ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը.
24) թերթերի և ամսագրերի օտարումը.
25) Կառավարության սահմանած ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի օտարումը.
26) թանկարժեք մետաղների և թանկարժեք մետաղներից պատրաստված՝ ԱՏԳԱԱ 7106, 7108, 7109, 7110, 7113, 7115 ծածկագրերին դասվող՝ ոսկերչական նշանակության կիսապատրաստուկների օտարումը.
27) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարումը.
28) Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից Կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը.
29) խաղատների գործունեության կազմակերպումը.
30) շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպումը.↩
31) ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում տվյալ ապրանքի հետ կապված սպասարկման ծառայությունների անհատույց մատուցումը, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց լրակազմող տարրերի փոխարինման նպատակով ապրանքի անհատույց մատակարարումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների արժեքում: Սույն կետը կարող է կիրառվել այն դեպքում, երբ կնքված պայմանագրի պայմանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածով սահմանված՝ հրապարակային պայմանագրերին ներկայացվող պահանջներին: Այն դեպքերում, երբ ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով նախատեսվում է այլ ապրանքների մատակարարում և (կամ) ծառայությունների մատուցում, ապա հրապարակային պայմանագրով մատակարարվող ապրանքի արժեքում այլ ապրանքների և (կամ) ծառայությունների արժեքը ներառելու փաստը պետք է հիմնավորվի հաշվապահական հաշվառման մեջ կիրառվող սկզբնական հաշվառման փաստաթղթերով և ԱԱՀ վճարողի կողմից հաստատված փաստաթղթերով (հրաման, հաստատված ինքնարժեքի հաշվարկ և այլն).
32) կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում բաժնեմասի կամ փայի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը.
33) օրենքով սահմանված կարգով իրականացվող՝ կազմակերպության վերակազմակերպման շրջանակներում ապրանքի մատակարարումը և (կամ) ծառայության մատուցումը.
34) սեփականաշնորհման կամ ապապետականացման գործարքների շրջանակներում ապրանքի մատակարարումը.
35) Հայաստանի Հանրապետության տարածք մշակութային արժեքների ներմուծումը.

36) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով (բացառությամբ «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքերի) արտահանված ապրանքների մատակարարումը.
37) օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կամ Կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների խմբի կողմից ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծումը, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են (այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ պետություններ).
38) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություն արտահանված կամ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ անդամ պետություն արտահանված սև և գունավոր մետաղների ջարդոնի մատակարարումը.
39) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից իրենց անձնական գույքի օտարման գործարքները.
40) անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին պատկանող՝ ժառանգության զանգվածում ներառվող գույքի՝ ժառանգին օտարումը.
41) Հայաստանի Հանրապետություն ժամանող ֆիզիկական անձանց կողմից «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.
42) Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց կողմից «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.
43) օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիների կողմից ծառայության ավարտից հետո «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.
44) ապահովագրական և վերաապահովագրական ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը.
45) կենսաթոշակային ապահովման ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը.
46) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով նախաձեռնողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին կամ վաճառողին, վաճառողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին, «Ակտիվների արժեթղթավորման և

ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում նախաձեռնողի կողմից արժեթղթավորման հիմնադրամից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման հիմնադրամի հետ ակտիվների փոխանակումը, ինչպես նաև ակտիվների օտարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված արժեթղթավորման ֆոնդին, արժեթղթավորման ֆոնդին ակտիվն օտարած անձի կողմից արժեթղթավորման ֆոնդից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման ֆոնդի հետ ակտիվների փոխանակումը.

47) բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների, վարկային կազմակերպությունների, ինչպես նաև սույն կետով սահմանված դեպքերում՝ այլ հարկ վճարողների կողմից հետևյալ ֆինանսական գործարքների ու գործառնությունների կատարումը.

ա. ցպահանջ, ժամկետային, խնայողական և նման այլ ավանդների ընդունման, բանկային և այլ հաշիվների բացման, վարման ու սպասարկման ծառայությունների, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը,

բ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից վարկերի կամ փոխառությունների տրամադրման, այդ թվում՝ պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման ու ֆակտորինգային այլ ծառայությունների մատուցումը,

գ. երաշխավորությունների, բանկային երաշխիքների տրամադրման, ակրեդիտիվների բացման ծառայությունների մատուցումը,

դ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արժեթղթերի օտարումը, արժեթղթերի ի պահ ընդունման և հաշվառման ծառայությունների մատուցումը,

ե. մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի, քարտերի և այլ գործիքների թողարկման, զեղչման, փոխանցման, զիջման կամ սպասարկման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի օտարումը,

զ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արտարժույթի (թղթադրամի և մետաղադրամի, բացառությամբ դրամագիտական նշանակություն ունեցող և այդ նպատակով օգտագործվող մետաղադրամների և բանկային տոմսերի) օտարումը և (կամ) փոխանակումը հայկական դրամի հետ, բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների օտարումը, փոխանցումը, փոխանակումը կամ այլ կերպ օտարումը և այդ գործարքներով նախատեսված բոլոր վճարումների կատարումը, բացառությամբ այն վճարումների, որոնք իրականացվում են այնպիսի գույքի փաստացի մատակարարման դիմաց, որի օտարումը Օրենսգրքի համաձայն ենթակա է ԱԱՀ-ով հարկման,

է. կանխիկի տրամադրման ծառայությունների մատուցումը,

ը. բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և այլ հարկ վճարողների կողմից ներդրումային ֆոնդի կառավարման, ներառյալ՝ իր կողմից կառավարվող (այդ թվում՝ պատվիրակման արդյունքում) ներդրումային ֆոնդի թողարկած արժեթղթերի տեղաբաշխման և (կամ) հետգնման (մարման) ծառայությունների մատուցումը,

թ. ներդրումային ֆոնդի պահառության ծառայության մատուցումը,

ժ. արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայության մատուցումը,

ժա. բանկային ոսկու օտարումը, բանկային ոսկով արտահայտված հաշիվների բացման ու վարման, դրանցով այլ գործառնությունների կատարման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև բանկերին և վարկային կազմակերպություններին բանկային ձուլակտորների օտարումը,
ժբ. օրենքով սահմանված կարգով բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի օտարումը: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ գրավի առարկան մինչև բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց պատկանող, եթե գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված չէ, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին,
ժգ. գումարների (հասույթների, պարտադիր, կոմունալ և այլ վճարների) ընդունման, ինչպես նաև աշխատավարձի, թոշակների, նպաստների, ապահովագրական և այլ վճարների կատարման ծառայությունների մատուցումը,
ժդ. լիզինգային պայմանագրի շրջանակներում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներմուծված այն ապրանքների ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) օտարումը, որոնց ներմուծման ժամանակ ԱԱՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով չի հաշվարկվել և չի վճարվել,
ժե. բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական վարձակալության (լիզինգի) ծառայության մատուցումը, եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին,
ժզ. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ներդրումային ծառայությունների մատուցումը, բացառությամբ արժեթղթերում և ածանցյալ ֆինանսական գործիքներում ներդրումների հետ կապված՝ հաճախորդներին խորհրդատվության տրամադրման ծառայության,
ժէ. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ոչ հիմնական ծառայությունների մատուցումը, բացառությամբ ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցման, ինչպես նաև կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ ընկերություններին խորհրդատվության տրամադրման ծառայությունների,
ժը. կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթերով և ածանցյալ ֆինանսական գործիքներով առևտրի կազմակերպման (միայն գործարքների համար գանձվող միջնորդավճարների մասով), ինչպես նաև կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների (պահանջների) որոշման և հաշվանցման (քլիրինգի) ծառայությունների մատուցումը,
ժթ. կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի պահառության, արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման, քլիրինգի և վերջնահաշվարկի հետ կապված ծառայությունների, ինչպես նաև օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով կենտրոնական դեպոզիտարիային թույլատրված այլ ծառայությունների (բացառությամբ խորհրդատվական ծառայությունների) մատուցումը,

ներառյալ՝ արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամի կողմից այդ ծառայությունների միջնորդավորման ծառայությունների մատուցումը,
ի. շուկա ստեղծողի կարգավիճակով արժեթղթերի երկկողմանի գնանշման ապահովման ծառայությունների մատուցումը:
ԱԱՀ-ից չեն ազատվում սույն կետով սահմանված ծառայությունների հետ կապված քաղվածքների և այլ տեղեկությունների ձևակերպման և տրամադրման, արժեթղթերի, չեկերի, վճարագրերի, վճարային փաստաթղթերի, քարտերի, թղթադրամի, մետաղադրամի, բանկային ոսկու պատրաստման, ֆաքսիմիլային ծառայությունների մատուցումը.
48) օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.
49) ներդրումային ֆոնդի կողմից անշարժ գույքի օտարումը տվյալ ներդրումային ֆոնդում մասնակցություն ունեցող անձին, եթե անշարժ գույքը նախկինում ներդրումային ֆոնդի կողմից, որպես ներդրումային ֆոնդում փայի կամ բաժնետոմսի դիմաց ներդրում, ձեռք է բերվել տվյալ անձից.
50) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից այն օտարերկրյա ապրանքների՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.
51) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը.
52) ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը.
53) Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարումը Հայաստանի Հանրապետության տարածքում.
54) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների շրջանակներում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը
55) տիեզերական օբյեկտների և տեխնիկայի օտարումը, դրանց վերանորոգման կամ արդիականացման, երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալների հաղորդման, մշակման, տիեզերական օբյեկտների արձակման, վայրէջքի և թռիչքի ընթացքում դրանց կառավարման ծառայությունների մատուցումը և (կամ) աշխատանքների կատարումը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:
**56) ֆիլմարտադրողների կողմից ազգային ֆիլմի հիմնանյութերի, ֆիլմի բնօրինակի կամ բնօրինակ պատճենի և ֆիլմի հետ կապված փաստաթղթերի անհատույց տրամադրումը Հայաստանի Հանրապետության ազգային արխիվին՝ մշտական պահպանության.**
**57) հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում գովազդի տեղադրումը ՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը .**

**58) կինոթատրոնում ֆիլմ ցուցադրելու գործունեությունը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:**

### Հոդված 108. Եկամուտ չհամարվող տարրերը

1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում՝

1) մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) կատարված ներդրումները, ինչպես նաև նախորդ հարկային տարիների հարկային վնասը մարելու նպատակով մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի սեփական կապիտալի այլ տարրերում կատարված ներդրումները՝ նախորդ հարկային տարիների հարկային վնասը չգերազանցող չափով.

2) շահութահարկ վճարողի լուծարման մասին որոշման առկայության դեպքում մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները.

3) շահութահարկ վճարողի բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը.

4) շահութահարկ վճարողի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը, եթե այդ բաժնետոմսերը, բաժնեմասերը կամ փայաբաժինները հետ են գնվել օրենքի պահանջով.

5) այլ կազմակերպության լուծարման դեպքում շահութահարկ վճարողի՝ այդ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների դիմաց ստացվող մնացորդային գույքի արժեքի և բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը.

6) համատեղ գործունեության մասնակցից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի ստացված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները, եթե սույն կետում նշված գործարքները կատարվում են հաշվետու մասնակցի կողմից Օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված հայտարարության ներկայացումից հետո.

7) ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական արդյունքը.

8) պարտավորությունների, այդ թվում՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված պարտավորությունների վերագնահատման բացասական արդյունքը.

9) հարկային արտոնությունների և վճարների գծով տրվող արտոնությունների գումարները.

10) հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարները.

11) ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները), աշխատանքները և ծառայությունները.

12) հարկ վճարողի լուծարման դեպքում մինչև հազար դրամ հարկային պարտավորության գումարը.

13) ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող եկամուտները (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահաբաժինների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից).

14) միասնական հաշվին առկա գումարների վերադարձն Օրենսգրքի 327-րդ հոդվածով սահմանված ժամկետից 30 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար հարկ վճարողի օգտին հաշվեգրվող տույժերը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով շահութահարկ վճարողին (հարկային գործակալին) վերադարձվող (փոխհատուցվող)՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները.

15) խաղատների, շահումով խաղերի և (կամ) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտները.

16) վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները.

17) Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի շրջանակներում անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից կատարվող կուտակային վճարները.

18) Կառավարության լիազորած մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ հաստատած կարգի համաձայն՝ բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ֆիզիկական անձանց (բացառությամբ որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար վարկ ստացած ֆիզիկական անձանց) նկատմամբ ձևավորված և մինչև 2018 թվականի մայիսի 31-ը անհուսալի ճանաչված ակտիվների մասով մինչև դրանց անհուսալի ճանաչելը հաշվարկված և նախկինում հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված՝ տվյալ ֆիզիկական անձին ներված (այդ թվում՝ մասնակի) տույժերի և (կամ) տուգանքների գումարները: Հարկման նպատակով եկամուտ չեն համարվում նաև փոխառուների նկատմամբ ձևավորված և անհուսալի ճանաչված ակտիվների գծով արտահաշվեկշռում (հետհաշվեկշռային հաշիվներում) հաշվառվելու ընթացքում հաշվարկված տոկոսները և (կամ) տույժերը և (կամ) տուգանքները՝ դրանց հաշվառման (հաշվարկման, հաշվեգրման) պահին, ինչպես նաև դրանց հետագա զիջման կամ ներման (այդ թվում՝ մասնակի) դեպքում.

19) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներից ստացվող եկամուտները�

20) տիեզերական օբյեկտների և տեխնիկայի օտարման, դրանց վերանորոգման կամ արդիականացման, երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալների հաղորդման,

մշակման, տիեզերական օբյեկտների արձակման, վայրէջքի և թռիչքի ընթացքում դրանց կառավարման ծառայությունների մատուցման և (կամ) աշխատանքների կատարման գործունեությունից ստացվող եկամուտները՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը.

21) բանկերի կամ վարկային կազմակերպությունների ստացած գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները, ապահովագրության պայմանագրի համաձայն, բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու կամ գրավատու ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը:

2. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում նաև՝

1) արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտները: Արտաքին տնտեսական գործունեություն է համարվում՝

ա. ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիդենտ շահութահարկ վճարողի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից,

բ. սույն կետի «ա» ենթակետով սահմանված՝ ապրանքի մատակարարման գործարքի հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, տրանսպորտային, բեռնաթափման, ուղեկցման, ապահովագրության և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, եթե այդ աշխատանքները կատարվել և (կամ) ծառայությունները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, մատուցվել են ապրանքը մատակարարող ոչ ռեզիդենտի կողմից,

գ. ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ռեզիդենտին կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող այլ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը:

**22) կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման նպատակով ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխից և պետական բյուջեից տրամադրվող գումարները.**

**23) հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից ստացվող եկամուտները՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը.**

**24) կինոթատրոնում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացվող եկամուտները՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:**

### Հոդված 112. Ծախս չհամարվող տարրերը

1. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար ծախս չեն համարվում՝

1) սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով.

2) այլ հարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները.

3) շահութահարկ վճարողի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը.

4) այլ կազմակերպության լուծարման դեպքում շահութահարկ վճարողի՝ այդ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների դիմաց ստացվող մնացորդային գույքի արժեքի և բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը.

5) համատեղ գործունեության մասնակցի կողմից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցին փոխանցված ապրանքները, նրա համար կատարված աշխատանքները և (կամ) նրան մատուցված ծառայությունները.

6) ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման բացասական արդյունքը.

7) պարտավորությունների, այդ թվում՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքը.

8) ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվների (այդ թվում՝ անդամավճարների), աշխատանքների և ծառայությունների գծով ծախսը կամ դրանց հաշվին կատարված ծախսը, այլ նվազեցումը կամ առաջացած կորուստը.

9) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների լուծարման ծախսերը, ինչպես նաև լուծարվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները.

10) հարկ վճարողի լուծարման դեպքում միասնական հաշվին առկա՝ մինչև հազար դրամ գումարը.

11) ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերի ձեռքբերման և օտարման, ինչպես նաև այդ ֆոնդերում մասնակցության հետ կապված այլ ծախսերը.

12) խաղատների, շահումով խաղերի և (կամ) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեության գծով կատարվող ծախսերը.

13) ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված ծախսերը.

14) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակների գծով կատարվող ծախսերը�

15) տիեզերական օբյեկտների և տեխնիկայի օտարման, դրանց վերանորոգման կամ արդիականացման, երկրի հեռակա դիտարկման արբանյակային տվյալների հաղորդման, մշակման, տիեզերական օբյեկտների արձակման, վայրէջքի և թռիչքի ընթացքում դրանց կառավարման ծառայությունների մատուցման և (կամ) աշխատանքների կատարման գործունեության գծով կատարվող ծախսերը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը.

16) բանկերի կամ վարկային կազմակերպությունների վճարած գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները, ապահովագրության պայմանագրի համաձայն, բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են

վարկառու կամ գրավատու ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկի մարմանը:

**17) հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի գծով կատարվող ծախսերը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը.**

**18) կինոթատրոններում ֆիլմի ցուցադրման գործունեության գծով կատարվող ծախսերը՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:**

**Հոդված 123.** Այլ նվազեցումները

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են՝

1) անվավեր ճանաչված գործարքների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտում ներառված գումարները.

2) Կառավարության սահմանած կարգով շահութահարկ վճարողների (բացառությամբ սույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի) կողմից՝

ա. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստին կատարվող մասհանումները,

բ. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումները գերազանցող գումարները,

գ. նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները:

Սույն կետի կիրառության իմաստով՝ 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից.

3) Կառավարության լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ սահմանած կարգով բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից՝

ա. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստին կատարվող մասհանումները,

բ. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումները գերազանցող գումարները,

գ. նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները.

4) հարկային տարվան նախորդող հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները՝ որպես Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 3-րդ կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված

նվազեցումների բացասական տարբերություն: Սույն կետի կիրառության իմաստով՝ հարկային վնասները նվազեցվում են այդ վնասների առաջացման հարկային տարվան հաջորդող հինգ հարկային տարիների համախառն եկամտից՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված հետևյալ կանոններն ու սահմանափակումները.

ա. հարկային տարվան նախորդող հինգ հարկային տարիների (կամ դրանցից մի քանիսի) գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները համախառն եկամտից նվազեցնելու հաջորդականության առումով առաջնահերթորեն նվազեցված է համարվում ավելի վաղ առաջացած հարկային վնասը,

բ. հարկային տարվան նախորդող 5 հարկային տարիների (կամ դրանցից մի քանիսի) գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները, տվյալ հարկային տարվա ծախսերը և տվյալ հարկային տարվա կորուստները համախառն եկամտից նվազեցնելու հաջորդականության առումով առաջնահերթորեն նվազեցված են համարվում տվյալ հարկային տարվա ծախսերը և տվյալ հարկային տարվա կորուստները,

գ. Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հարկման հատուկ համակարգերի շրջանակներում իրականացվող գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն,

դ. մինչև Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հարկման հատուկ համակարգերի շրջանակներում գործունեություն սկսելը՝ հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում իրականացված գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները հետագայում կրկին հարկման հատուկ համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում համախառն եկամտից նվազեցնելու առումով այդ վնասների առաջացման հարկային տարվան հաջորդող հինգ հարկային տարիների հաշվարկում ներառվում են նաև հարկման հատուկ համակարգերի շրջանակներում գործունեության իրականացման տարիները,

ե. բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նախորդող հինգ հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասը նոր ստեղծված կազմակերպություններին փոխանցվում է հավասարաչափ, եթե բաժանիչ հաշվեկշռով այլ չափ նախատեսված չէ,

զ. առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նախորդող 5 հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասը նվազեցվում է միայն այն կազմակերպության համախառն եկամտից, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ (չի փոխանցվում առանձնացված կազմակերպությանը կամ կազմակերպություններին), եթե բաժանիչ հաշվեկշռով այլ բան նախատեսված չէ,

է. սույն կետի «ե» և «զ» ենթակետերի համաձայն՝ հարկային վնասները նվազեցնելու իրավունք ունեցող կազմակերպությունների մոտ նախորդող հինգ հարկային տարիների հաշվարկը կատարելիս հաշվի են առնվում նաև վերակազմակերպվող կազմակերպության մոտ՝ մինչև բաժանումը կամ առանձնացումը, այդ հարկային վնասների առկայության հարկային տարիները, որոնց մասին, ըստ հարկային վնասների առաջացման հարկային տարիների, նշում է կատարվում բաժանիչ հաշվեկշռում,

ը. միաձուլման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում միաձուլված կազմակերպությունների նախորդող հինգ հարկային տարիների գործունեության

արդյունքներով առաջացած հարկային վնասները չեն նվազեցվում նոր ստեղծված կազմակերպության համախառն եկամտից,

թ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում միացող կազմակերպության կամ կազմակերպությունների նախորդող հինգ հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները չեն նվազեցվում այն կազմակերպության համախառն եկամտից, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ,

ժ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության նախորդող հինգ հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, չեն նվազեցվում տվյալ կազմակերպության համախառն եկամտից.

5) գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին, մանկատներին, բժշկական հաստատություններին, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը.

6) շահութահարկ վճարողի մոտ վարձու աշխատող համարվող (այդ թվում՝ համատեղության կարգով), ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա շահութահարկ վճարողին ծառայություն մատուցող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրից ստացվող եկամուտների հանրագումարի 150 տոկոսը՝ անկախ աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից.

7) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ածանցյալ ֆինանսական գործիքների միասնական գրանցամատյանում գրանցված ածանցյալ ֆինանսական գործիքներով կատարվող այն վճարումները, որոնք ձևավորվել են պարտավորությունների հաշվանցի և (կամ) զուտացման արդյունքում: Սույն կետի կիրառությունն ապահովելու նպատակով հարկային մարմնին առևտրի գրանցամատյանից տեղեկությունների տրամադրման կարգը, ժամկետները և ծավալները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ իրավական ակտով:

2. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են նաև ստացվող շահաբաժինները:

**8) ազգային ֆիլմերի աջակցության դրամագլխին կատարվող մասահանումները:**

### Հոդված 127. Շահութահարկի նվազեցումը

1. Կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողի (բացառությամբ առևտրի կամ ֆինանսական ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների) գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող հինգ հարկային

տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան հարկային տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան հարկային տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գործարար ծրագրերի հավանության արժանացման և լրացուցիչ աշխատավարձի հաշվարկման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի հաշվետու տարվա շահութահարկի գումարը նվազեցվում է **այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությանը կամ** առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում՝ Կառավարության որոշմամբ սահմանված զեղչ սակագներով կամ անվճար ծառայությունների մատուցման հետևանքով չստացված (պակաս ստացված) եկամուտների չափով, բացառությամբ

1) եթե հաշվետու տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով տվյալ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համար սահմանված է սուբսիդիայի հատկացում.

2) եթե տվյալ ռեզիդենտ շահութահարկ վճարողին այդ ծառայությունների մատուցման իրավունքը տրվել է համապատասխան լիցենզավորման կամ ծանուցման կամ մրցույթի անցկացման կարգով և լիցենզիայի կամ ծանուցման կամ մրցույթի պայմաններում նախատեսվել է, որ առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում Կառավարության որոշմամբ սահմանված զեղչ սակագներով կամ անվճար ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած հարկային վնասները փոխհատուցման ենթակա չեն:

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**~~Հոդված 217. Գիտական կամ առևտրային նմուշների ժամանակավոր ներմուծումը~~**

-

~~1. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով ժամանակավոր ներմուծվող գիտական կամ առևտրային նմուշները ենթակա են պարզեցված կարգով հայտարարագրման՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:~~

~~2. Կառավարությունը կարող է սահմանել այն ապրանքների առավելագույն քանակը և (կամ) առավելագույն արժեքը, որոնք ժամանակավոր ներմուծվում են որպես գիտական կամ առևտրային նմուշներ միևնույն անձի կողմից՝ միանգամյա կամ որոշակի ժամանակահատվածում՝ Միության մաքսային օրենսդրությանը համապատասխան:~~

~~3. Ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ուղեկցվող ուղեբեռում գտնվող, ինչպես նաև փոստային առաքումներով տեղափոխվող գիտական կամ առևտրային նմուշները, որոնց արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը, հայտարարագրվում են պարզեցված կարգով՝ մաքսային հայտարարագրի փոխարեն մաքսային մարմիններին ներկայացնելով գիտական կամ առևտրային նմուշները ստացող կազմակերպության գրավոր դիմում: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:~~

~~4. Գիտական կամ առևտրային նմուշների՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով բաց թողնելու ժամկետը մաքսային հայտարարագրի ընդունման պահից կազմում է չորս ժամ՝ մաքսային հայտարարագրի հետ միաժամանակ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:~~

~~5. Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց ժամանակավոր ներմուծման համար կարող է սահմանվել մինչև մեկ աշխատանքային օր բաց թողնելու ժամկետ:~~

**Հոդված 217. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների ժամանակավոր ներմուծումը**

**1. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ֆիլմարտադրության կամ կինոփառատոներում և կինոարվեստի այլ միջոցառումներում ֆիլմի ցուցադրման նպատակով ժամանակավոր ներմուծվող գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ենթակա են պարզեցված կարգով հայտարարագրման՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:**

**2. Կառավարությունը կարող է սահմանել այն ապրանքների առավելագույն քանակը և (կամ) առավելագույն արժեքը, որոնք ժամանակավոր ներմուծվում են որպես գիտական կամ առևտրային նմուշներ, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքներ միևնույն անձի կողմից՝ միանգամյա կամ որոշակի ժամանակահատվածում՝ Միության մաքսային օրենսդրությանը համապատասխան:**

**3. Ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ուղեկցվող ուղեբեռում գտնվող, ինչպես նաև փոստային առաքումներով տեղափոխվող գիտական կամ առևտրային**

նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները, որոնց արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը, հայտարարագրվում են պարզեցված կարգով՝ մաքսային հայտարարագրի փոխարեն մաքսային մարմիններին ներկայացնելով գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ստացող կազմակերպության գրավոր դիմում: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:

4. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով բաց թողնելու ժամկետը մաքսային հայտարարագրի ընդունման պահից կազմում է չորս ժամ՝ մաքսային հայտարարագրի հետ միաժամանակ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:

5. Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց ժամանակավոր ներմուծման համար կարող է սահմանվել մինչև մեկ աշխատանքային օր բաց թողնելու ժամկետ:

~~Հոդված 221. Գիտական կամ առևտրային նմուշների ժամանակավոր արտահանումը~~

~~1. Գիտական կամ առևտրային նմուշները, որոնք ժամանակավոր արտահանվում են Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս՝ փորձարկումների, հետազոտությունների, ստուգումների ենթարկելու կամ նման գործողությունների իրականացման ընթացքում օգտագործելու համար, հայտարարագրվում են մաքսային հայտարարագրման պարզեցված կարգով՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:~~

~~2. Ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ, ինչպես նաև փոստային առաքումներով Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս ժամանակավոր արտահանվող գիտական կամ առևտրային նմուշները հայտարարատուի ցանկությամբ կարող են հայտարարագրվել պարզեցված կարգով՝ գիտական կամ առևտրային նմուշները ուղարկող կազմակերպության գրավոր դիմումը որպես մաքսային հայտարարագիր ներկայացնելով: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:~~

~~3. Գիտական կամ առևտրային նմուշները «Ժամանակավոր արտահանման» ընթացակարգով բաց են թողնվում մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ չորս ժամվա ընթացքում:~~

~~4. Մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց բաց թողնման ժամկետը կարող է կազմել մինչև մեկ աշխատանքային օր:~~

**Հոդված 221. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների ժամանակավոր արտահանումը**

1. Գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները, որոնք ժամանակավոր արտահանվում են Հայաստանի

Հանրապետությունից Միության սահմաններից դուրս՝ փորձարկումների, հետազոտությունների, ստուգումների ենթարկելու, ֆիլմարտադրության կամ կինոփառատոներում և կինոարվեստի այլ միջոցառումներում ֆիլմի ցուցադրման կամ նման գործողությունների իրականացման ընթացքում օգտագործելու նպատակով հայտարարագրվում են մաքսային հայտարարագրման պարզեցված կարգով՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ, ինչպես նաև փոստային առաքումներով Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս ժամանակավոր արտահանվող գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները հայտարարատուի ցանկությամբ կարող են հայտարարագրվել պարզեցված կարգով՝ գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ուղարկող կազմակերպության գրավոր դիմումը որպես մաքսային հայտարարագիր ներկայացնելով: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:

3. Գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները «ժամանակավոր արտահանման» ընթացակարգով բաց են թողնվում մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ չորս ժամվա ընթացքում:

4. Մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց բաց թողնման ժամկետը կարող է կազմել մինչև մեկ աշխատանքային օր:

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 189.19. Ֆիլմի ցուցադրման վերաբերյալ տեղեկություն տրամադրելու պահանջները խախտելը

1. Ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ ազգային ֆիլմերի մասնաբաժնի, ինչպես նաև հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից ու կինոթատրոններում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ ազգային ֆիլմերի մասնաբաժնի, ինչպես նաև հեռուստատեսությամբ ազգային ֆիլմերի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդից ու կինոթատրոններում ֆիլմի ցուցադրման գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ կեղծ տեղեկություն տրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հոդված 189.20. Ազգային ֆիլմը մշտական պահպանության հանձնելու պահանջները խախտելը

1. Ազգային ֆիլմի հիմնանյութերը, ֆիլմի բնօրինակը կամ բնօրինակ պատճենը և ֆիլմի հետ կապված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ մշտական պահպանության հանձնելու պահանջները խախտելը.

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմարտադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքում վարչական իրավախախտում կատարած անձը լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից կողմից իրավախախտումը հայտնաբերելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է իրավախախտման հատկանիշները, ապա նա ազատվում է նշանակված վարչական տույժը կատարելու պարտականությունից:

Հոդված 189.21. Առանց օրենքով նախատեսված պահանջները բավարարելու հանրային տարածքներում ֆիլմի նկարահանում իրականացնելը

1. Առանց օրենով նախատեսված պահանջները բավարարելու հանրային տարածքներում ֆիլմի նկարահանում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմարտադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմարտադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Հոդված 189.22. Առանց ֆիլմը դասակարգելու և վարձույթի վկայական ստանալու ֆիլմի վարձույթ իրականացնելը

1. Առանց ֆիլը դասակարգելու և վարձույթի վկայական ստանալու ֆիլմի վարձույթ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում վարձույթ իրականացնողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում վարձույթ իրականացնողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 189.23. Ազգային ֆիլմ ցուցադրելու, օտարալեզու ֆիլմի կրկնօրինակումը կամ ենթագրումը ապահովելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու պահանջները խախտելը

1. Ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ ազգային ֆիլմերի մասնաբաժինը 20 տոկոս կազմելու, օտարալեզու ֆիլմի հայերեն կրկնօրինակումը կամ տեսանելի ու հստակ ենթագրումը ապահովելու, ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու պահանջները խախտելը.

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում.

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

## ՀՈԴՎԱԾ 219.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Տարածքային կառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 1-ին, 9-րդ մասերով, 152.1-ին հոդվածի 4-րդ մասով և 54.5-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տեղական ինքնակառավարման մարմինները քննում են սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով, 48-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, 113-րդ, 124.7-րդ հոդվածով, 152.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ

մասերով, 152.2-րդ հոդվածի 1-ին մասով, 156-րդ, 157-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.15-րդ, 158-րդ (բացառությամբ 2-րդ, 3-րդ, 12-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ մասերի), 162-րդ, 169.14-րդ հոդվածի 4-րդ մասով, 180-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, 169.16-րդ, 189.11-րդ, 189.12-րդ, **189.18-րդ, 189.19-րդ, 189.20-րդ, 189.21-րդ, 189.22-րդ և 189.23-րդ** նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նաև սույն օրենսգրքի 114-րդ, 154-րդ, 154.1-րդ, 156.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մասնավոր գերեզմանատների մասով, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերով 169.1-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Տարածքային կառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն մարզպետները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ համայնքի ղեկավարները, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք: